


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱԿԱԿՆԵՐԻ  
ՄԱՐՏԻԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԳԵՆԵՐԱԼ  
ԲԵՅՔՈՒԹՈՎ

ՍՍՌՍ ԳԻՏՈՒԹ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

ନୀରାତ୍ରିମହିନୀ । ୧୯୬୨୦ସାଲା  
ବୋଲାପ୍ରକାଶନକାରୀମହିନୀ । ୧୯୬୨୦ ମୁଦ୍ରଣ

ମହାକାଵ୍ୟ  
କୃତିମହିନୀ

ମହିନୀ

ମହିନୀ ମହିନୀ ମହିନୀ ମହିନୀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## Վ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

2966

ԳԵՆԵՐԱԼ  
Վ. Օ. ԲԵՀԵՇԵՈՒԹՈՎ



ՍՍՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ  
ԵՐԵՎԱՆ 1 9 4 3

1 9 4 3

**ՍԵՐԻԱ՝ ԽԱՄԲԱԳՐՈՒՐՅԱՆՄ ակադ. Հ. ՕՐԲԵԼԻ**

**Շապիկը՝ նկարիչ Մ. Դ. ՄԱՆԵՎ**

---

**Армянский Филиал Академии Наук СССР**

---

Боевые подвиги сынов Армении

В. ПАРСАМЯН

ГЕНЕРАЛ

В. О. БЕБУТОВ

(На армянском яз.)

Изд. Армфан. Ереван, 1943


ՎՖ 02890, պատվեր 598, տիրաժ 4000.

Սառըագրված է տպելու 24 օգոստոսի 1943 թ.

---

ՆԳԺԿ Վարչունաբաժնի տպարան, Երևան.





19-ըդ դարի կովկասյան պատերազմների պատմությունը հարուստ է հերոսական անցքերով:

Այդ պատերազմներին մասնակցած ղինվորականներից շատերն են աչքի ընկել իրենց քաջությամբ, անձնվիրությամբ և ռազմական բարձր հատկություններով:

Մուս ռազմիկները, ինչպես Մուսաստանում և Եվրոպայում մղած շատ ու շատ մարտերում, այնպես էլ կովկասյան դաժան պատերազմներում, երկան են բերել իրենց ժողովրդի քաջարի ոգին, նրա ռազմական տաղանդը:

Մուսական քաջարի բանակների մղած հաղթական պատերազմները ոգեշնչել են նաև Անդրկովկասի ազատասեր ժողովուրդներին, վերածնել են նրանց անցյալի ռազմական ոգին: Մեծ ու հզոր Մուսաստանի օգնությամբ խաների և փաշաների ծանր լծից ազատագրվելու հույսերը նոր լիցք են տվել

Անդրկովկասի ժողովուրդների ազատագրաւ  
կան պայքարին; Այդ պայքարի բովում էլ  
հենց, կոփվել է ոռւս մեծ ժողովրդի և Ան-  
դրկովկասի ժողովուրդների գենքի եղբայ-  
րությունը:

Վասիլ Օսիպովիչ Բեհբութովը 19-րդ դա-  
րի հայ նշանավոր զորավարների մեջ առա-  
ջիններից էր, որ պատանի հասակից սիրեց  
ուղմական գործը, մտավ ոռւսական քաջաւ-  
րի բանակի շարքերը, աճեց այդ բանակի  
շարքերում՝ հասնելով գեններալի բարձր  
աստիճանի:

Բեհբութովը ծնվել է 1791 թ. Թիֆլի-  
սում: Նրա նախնիներն աչքի ընկնող պե-  
տական, ուղմական և դիվանագիտական  
պաշտոններ են վարել Վրաստանում: Պապը՝  
Բարսեղ Բեհբությանը՝ Հերակլ Ա-ի հետ  
մասնակցել էր Նադիր շահի հնդկական ար-  
շավանքին ու իր մատուցած ծառայություն-  
ների համար ստացել թանգարժեք սուր և  
միսկարբաշու պաշտոն՝ Նադիր շահի պա-  
լատում:

Հերակլ Ա-ի թագավորության ժամանակ

Բեհըությանը վարում է Թիֆլիսի մելիքի  
պաշտոնը, որը հետագայում անցնում է նրա  
ժառանգներին՝ Հովհաննես և Հովսեփ Բեհ-  
ըությաններին:

Բեհըությաններն ակտիվ մասնակցու-  
թյուն են ունենում Հերակլի և նրա հաջորդ-  
ների բոլոր պատերազմներին։ Վասիլ Բեհ-  
ըութովի հայրը՝ Հովսեփ Բեհըությանը՝  
տարիներ շարունակ վրացական բանակի  
շարքերում կռվել էր պարսիկների դեմ,  
1800 թ. վրացական աշխարհապորի առաջին  
շարքերում մարտնչել Ավարիայի Օմար խա-  
նի դեմ, 1804 թ., Ցիցիանովի արշավանքի  
ժամանակ, Զանդու գետի մոտ ջարդել Երե-  
վանի Հուսեին Կուլի խանի զորքերին, և  
այլն։ Ռուսական կառավարությունը բարձր  
գնահատելով Հովսեփի Բեհըությանի ռազմա-  
կան քաջագործությունները, նրան տվել էր  
գնդապետի աստիճան և պարզեատրել ալ-  
մաստներով զարդարված՝ ս. Աննայի երկ-  
րորդ աստիճանի շքանշանով։

Բեհըությանները ռուսական օրինացի-  
այի ջերմ կողմանակիցներ էին։ Նրանք, ինչ-

պես հայերի, այնպես էլ վրացիների միակ  
փրկությունը համարում էին Ռուսաստանի  
տիրապետության տակ անցնելը: Բեհրու-  
թյանների քաղաքական այդօրինակ վար-  
քագիծը, նրանց ազդեցիկ դիրքը Վրաստա-  
նում, հաշվի էր առնվում ռուսական կառա-  
վարության և հրամանատարության դե-  
կավար շրջաններում: Վերջիններս ամեն  
կերպ սիրաշահում էին Բեհրությաններին և  
մոտիկ կապեր պահպանում նրանց հետ:  
Հետագայում ևս Բեհրությանների ընտա-  
նիքը շարունակում է մոտիկ կապեր պահ-  
պանել ռուս նշանավոր զինվորական և քա-  
ղաքական գործիչների հետ (Երմոլով, Գրի-  
բոյենով, Վորոնցով և այլն):

Բեհրությանների ընտանիքի ռազմական  
տրադիցիանները, ռուս նշանավոր զինվորա-  
կանների հետ ունեցած սխտեմատիկ շփում-  
ները որոշիչ նշանակություն են ունենում  
նաև Վասիլ Օսիպովիչ Բեհրութովի համար:

1802 թվականին Կովալենսկու նախա-  
ձեռնությամբ Թիֆլիսում բացվում է Աղնը-  
վականների դպրոց: Դա ռուսական կառա-

վարության բացած առաջին դպրոցն էր  
Անդրկովկասում: Բեհրութովը մի քանի տա-  
րի շարունակ սովորում է այդ դպրոցում:  
Դպրոցն ավարտելուց հետո հայրը նրան  
ուղարկում է Պետերբուրգ՝ զինվորական  
կրթություն ստանալու:

1807—1809 թ.թ. Բեհրութովը սովորում  
է Պետերբուրգի առաջին կադետական կոր-  
պուսում, որն ավարտելուց հետո ստանում  
է պրապորչիկի աստիճան: Պավլովյան  
զինվորական այդ դպրոցում սովորություն  
կար լավագույն ուսանողների նկարները  
կախել ընթերցասրահում: Ընդամենը 10  
այդպիսի ուսանողների նկարներ են եղել  
փակցված, որոնցից մեկը Բեհրութովի  
նկարն է եղել:

Վերադառնալով հայրենիք, Բեհրութովը  
սկզբում աշխատում է Խերսոնյան գրե-  
նադերական գնդում որպես գումարտակի  
ադյուտանտ, իսկ հետո՝ Կովկասի կառավար-  
չապետ և զորքերի գլխավոր հրամանատար  
գեներալ Տորմասովի մոտ:

1810 թվականին գեներալ Տորմասովի

հետ երիտասարդ Բեհրութովը մասնակցում է Ախալցխայի բլոկադային։ Դա նրա ռազմական մկրտությունն էր։ 1811 թվականին գեներալ Տորմասովին փոխարինում է գեներալ-լիյտենանտ Պառլուչչին։ Վերջինս Բեհրութովին վերցնում է իրեն մոտ որպես ադյուտանտ։ Նոր պաշտոնում Բեհրութովը շատ շուտով աչքի է ընկնում իր ռազմական ընդունակություններով, կազմակերպչական շնորհքով, երկրին ու ժողովրդին ծանոթ լինելով, իր կրթությամբ։ Բացի մայրենի լեզվից, Բեհրութովը գիտեր վրացերեն, պարսկերեն, թյուրքերեն, ուռուսերեն, մասամբ և ֆրանսերեն ու գերմաներեն։

Գեներալ Պառլուչչին այն աստիճանը բարձր է գնաճատում Բեհրութովին, որ երբ 1812 թ. նշանակվում է Նապոլեոնի գեմ գործող առաջին բանակի շտաբի պետ, նրան իրեն հետ տանում է Ռուսաստան։ Այդպիսով, Բեհրութովը 21 տարեկան հասակում բախտ է ունենում մասնակցելու ուռուս ժողովրդի 1812 թ. հայրենական մեծ պատերազմին։

Գեներալ Բեհրութովը մասնակցում է  
Նապոլեոնի մարշալ Մագդոնալդի դեմ մըզ-  
ված կուիմսերին և նրա զորքերի հետա-  
պընդմանը՝ Ռիդայից մինչև Մեմել:

Բեհրութովի մասնակցությունը նապո-  
լեոնական հափշտակիչների դեմ մղված հայ-  
րենական պատերազմին ու եվրոպական  
կամպանիային, ռազմական մի ամբողջ շկո-  
լա է հանդիսանում ինչպես ոռուս շատ հայտ-  
նի զինվորականների, այնպես էլ նրա հա-  
մար: Այս կամպանիայի տարիներին Բեհ-  
րութովը մոտիկից ծանոթանում է ոռուս ժո-  
ղովրդի ռազմական ունակությունների և  
ոռուսական զենքի աչքի ընկնող ներկայա-  
ցուցիչների հետ: Երիտասարդ սպայի վրա  
անջնջելի տպավորություն է թողնում ան-  
մոռանալի 12 թվականը:

1816 թվականին Կովկասի կառավար-  
չապետ և զորքերի գլխավոր հրամանատար  
է նշանակվում 1812 թ. հայրենական պա-  
տերազմի հերոս Ալեքսեյ Երմոլովը: Նշա-  
նավոր զորավարը ծանոթ լինելով Բեհրու-  
թովի ընդունակություններին, նրան իր

հետ ըերում է Կովկաս՝ իրրե իրեն աղյուսանությունում է Երմոլովի մոտ, նրա անմիջական զեկավարության տակ ավելի ու ավելի են աճում Բեհրութովի ռազմական, վարչական և գիվանագիտական ընդունակությունները:

1817 թ. Բեհրութովիլը մասնակցում է Երմոլովի պարսկական զեսպանությանը. անցնում է Հայաստանով, ծանոթանում է պարսկական խաների լծի տակ հեծող հայ ժողովրդի չարքաշ վիճակին: Լինում է Թափրիզում և Թեհրանում, ծանոթանում է Ֆաթ-Ալի շահի պալատականների, գահաժառանդ Աբբաս-Միրզայի, պարսկական բանակի ու նրա հրամանատարների հետ: Բեհրութովի բազմակողմանի և հուանդուն գործունեությունն այդ օրերին՝ ավելի է բարձրացնում նրա հեղինակությունը Երմոլովի աչքում: Նրան շատ էր օգնում նաև հայերեն ու պարսկերեն իմանալը:

1819—1820 թ. թ. Բեհրութովիլը մասնակցում է Երմոլովի և Մագաթովի գլխավորությամբ մղված Կովկասյան կոփմաներին: Նշանավոր այդ զորավարների ձեռքի տակ

նա է՛լ ավելի է կոփվում ուազմական գործի  
մեջ:

1821 թ. Բեհըութովը տեղափոխվում է  
լեյբ-դվարդիական Սեմյոնովյան գունդը  
որպես կազիտան, իսկ հետո, գնդապետի  
աստիճան ստանալով, նշանակվում է Մին-  
դրելյան գնդի հրամանատար: Այնուհետև  
մի քանի տարի շարունակ նա աշխատում  
է իմերեթիայում, որպես երկրի կառավա-  
րիչ և 22-րդ հետեւակ դիվիզիայի երկրորդ  
բրիգադայի հրամանատար: 1828 թ. սկզբնե-  
րին Բեհըութովը ստանում է գեներալ-մա-  
յորի աստիճան:

1828 թ. գարնանն սկավում է ոուս-թուր-  
քական պատերազմը: Դրաֆ Պասկեիչը, որը  
1826—1828 թ. թ. ոուս-պարսկական պա-  
տերազմներում տարած իր փառահեղ հաղ-  
թանակներից հետո մեծ զորավարի համբավ  
էր ձեռք բերել Բեհըութովին հրավիրում է  
մասնակցելու Թյուրքիայի դեմ մղվելիք պա-  
տերազմին: Բեհըութովը ողեռությամբ է  
ընդունում Պասկեիչի հրավերը: Իր զորա-  
բաժնի հետ նա մասնակցում է մի շարք

կոիթսերի, բայց ամենից ավելի ակնառու է լինում նրա մասնակցությունն Ախալցխայի նշանավոր ամրության գրավմանը:

Ախալցխան թյուրքերի կարևորագույն ամրություններից էր, օժտված բնական և արհեստական պաշտպանական հնարավորություններով։ Ախալցխայի բերդապահ զորքը հայտնի էր իր անօրինակ քաջությամբ։ Թյուրքական զորքերի գլխավոր հրամանատար ՔյոսաւՄահմեդ փաշան վըճռել էր մինչև վերջին շունչը կովել և երբեք չհանձնել ըերդը։ Հանձնվելու մասին Պասկեիչի արած առաջարկին նա պատասխանել էր՝ «Մենք որոշել ենք մենել մեր քաղաքի պատերի տակ»<sup>1</sup>։

Օգոստոսի 12-ին Պասկեիչը շտաբսկապիտան Ղորդանյանի միջոցով երկըորդ անգամ է առաջարկում առանց արյուննեղության հանձնել Ախալցխան։ ՔյոսաւՄահմեդ փաշան այս անգամ շատ լակոնական ոճով

<sup>1</sup> Акты КАК, т. VII, стр. 755.

պատասխանում է. «Մի սուր և մեզ բաժանում»<sup>1</sup>:

Օգոստոսի 15-ին սկսվում է Ախալցխայի քերդի գրանը: Մուսական քաջարի զորքերը շատ բարձր տրամադրությամբ և հաղթանակի հավատով լցված՝ հարձակվում են թշնամու վրա: Գեներալ Բեհրութովն իր զորաբաժնով գտնվում էր գրոհողների առաջին շարքերում և սեփական օրինակով ոգեշնչում էր մարտիկներին ու հրամանատարներին: Բեհրութովը լինում էր կովի ամենաաղծվարին հատվածներում, ղեկավարում էր նույնիսկ քաղաքի առանձին տների վրա կատարվող գրոհները:

Հակառակորդի թվով մի քանի անգամ ավելի զորքերի գիմադրությունը գերազանցում էր ամեն բանի: Բայց, չնայած դրան, ոռուսական քաջարի զորքերին հաջողվում է կոտրել թշնամու համառ դիմադրությունը

<sup>1</sup> История военных действий в Азиатской Турции в 1828—1829 годах, т. I, стр. 319, 1838 г.

և առաջին անգամ ոռւսական դրոշակ բարձրացնել Ախալցխայի բերդի վրա:

Ախալցխայի պաշարման և նրա գրոհի ժամանակ ցուցաբերած իր եռանդուն գործունեության, խիզախության, թշնամուղեմ տարած փայլուն հաղթանակի համար Բեհրութովը պարզեատրվում է ալմաստներով զարդարված ոսկյա սրով՝ «Քաջուքյան համար» մակագրությամբ:

1828 թ. օգոստոսի 16-ին Պասկեիչը գեներալ-մայոր Բեհրութովին նշանակում է Ախալցխայի նորակազմ Մարզային Վարչության պետ: Մի ամբողջ տարի, մինչև 1829 թ. օգոստոսի 22-ը, Բեհրութովը հաջողությամբ վարում է Ախալցխայի Մարզային Վարչության պետի պաշտոնը: Նրա առաջին գործերից մեկը լինում է թյուրք փաշաների և ենիչերիների կողմից հարըստահարված ու կողոպտված հայ և վրացի բնակչության դրության բարեփոխումը:

Գեներալ Բեհրութովի անունն ավելի է հոչակվում Ախալցխայի պաշտպանության այն ծանր օրերին, երբ Ահմեդ բեկը 20 հա-

զարանոց կորպուտով պաշարում է քաղաքը  
և սպառնում բնաջինջ անել:

Անօրինակ ծանր դրություն է ստեղծ-  
վում Բեհրութովի ու նրա հրամանատարու-  
թյան տակ եղած փոքրաթիվ զորաբաժնի  
(մոտ երկու գումարտակ) համար: Բայց քաջ  
զորավարը մի վայրկյան անդամ չի շփոթ-  
վում և չի կորցնում իրեն: Հաշվի առնե-  
լով դրության լրջությունը, իրեն հատուկ  
կաղմակերպչական շնորհքով նա մորիլիզա-  
ցիայի է ենթարկում իր տրամադրության  
տակ եղած փոքրաթիվ ուժերը և 15 օր շա-  
րունակ, գիշեր-ցերեկ, անհավասար մարտ  
մղում Ահմեդ բեկի կորպուսի դեմ:

Ահմեդ բեկը տեսնելով, որ կովով չի կա-  
րող վերցնել ամրոցը, դիմում է խորաման-  
կության: Նա սղարլամենտյոր է ուղարկում  
Բեհրութովի մոտ և հայտնում՝

— Աստծու և սուլթանի ողորմածությամբ  
ևս հեշտությամբ կարող եմ մտնել բերդը,  
բայց քանի որ սիրով և բարեկամաբար եմ  
տրամադրված ձեր հանդեպ, ուստի ցանկա-

նում եմ, որ դուք առանց արյունհեղության  
հանձնվեք և մնաք անվսաս:

Բեհրութովը պատասխանում է.

«Պատվելի Ահմեդ փաշա, ոռուսական զին-  
վորների քաջությունը ձեղ հայտնի է: Նրանք  
գիտեն ամրոցներ գրավել և պաշտպանել:  
Աստծու օգնությամբ, իմ քաջ զինվորների  
հետ ես միշտ պատրաստ եմ դիմադրել ձեզ:  
Զնայած դուք ենթադրում եք, որ հեշտ է  
բերդ մտնելը, բայց ես հակառակն եմ կար-  
ծում ձ<sup>1</sup>:

Բեհրութովին չեն մոլորեցնում Ահմեդ  
քեկի ոչ սպառնալիքները և ոչ էլ խորա-  
մանկությունը: Համառ ու հաստատակամ իր  
վճռի մեջ՝ նա շարունակում է պաշտպանել  
Ախալցխայի բերդը:

Ականատեսների վկայությամբ, Բեհրու-  
թովն Ախալցխայի հերոսական պաշտպանու-  
թյան ոգին էր: Նրա օրինակը վարակիչ էր  
ամենքի համար:

---

<sup>1</sup> В. Потто, Кавказская война, т. IV, вып. 2, ср. 130—131, 1888 г., Тифлис.

«Գեներալ-մայոր իշխան Բեհրութովը սեփական մասնակցությամբ և օրինակով ոգեշնչում էր յուրաքանչյուրին։ Զինվորները նրան տեսնելով բերդի պատերի վրա, միահամուռ կերպով պատրաստակամություն էին հայտնում մեռնել զենքը ձեռքներին, բայց երբեք չհանձնվել։ Զինվորների այսօրինակ անվեհերությունը փոխադարձաբար ժաշակերում էր եենց իրեն՝ հրամանատարին և նոր եռանդ ներշնչում նրան։<sup>1</sup>

Այսպիսին էր ահա, գեներալ Բեհրութովն Ախալցխայի պաշտպանության դժվարին օրերին։

Գեներալ Բեհրութովը չի սահմանափակվում Ահմեդ բեկի կորպուսի դեմ միայն պաշտպանողական մարտեր մղելով։ Երբ նրան հայտնի է դառնում, որ թյուրքերը, հուսահատված իրենց անհաջող գրոհներից և կրած ծանր կորուստներից, պատրաստվում են նահանջել, նա իր մի բուռն քա-

---

<sup>1</sup> История военных действий в Азиатской Турции в 1828—1829 годах, ч. II, стр. 30.

ջերի գլուխ անցած, անսպասելիորեն դուքս  
է գալիս բերդից և հանկարծակի հարձա-  
կում գործում թյուրքերի վրա: Թշնամին  
խուճապահար փախուստի է դիմում, կռվի  
դաշտում թողնելով մեծ քանակությամբ  
սպանվածներ, վիրավորներ, դերիներ և  
ռազմավար:

Ընդհանուր առմամբ, Ախալցխայի հերո-  
սական պաշտպանության օրերին Բեհրու-  
թովն իր քաջ հրամանատարների ու զին-  
վորների հետ հակառակորդի շարքից հանում  
է չորս հազարից ավելի զինվոր (սպանված  
ու վիրավոր), վերցնում է մի քանի հա-  
րյուր գերի, թնդանոթներ և այլ ռազմա-  
վար, տալով ընդամենը 24 սպանված և 52  
վիրավոր:

Ախալցխայի պաշտպանության համար  
Բեհրութովն ստանում է ս. Աննայի առաջին  
աստիճանի շքանշան:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Ախալ-  
ցխայի բլոկադայի, գրոհի և այնունետև նըս-  
հերոսական պաշտպանության օրերին գե-  
ներալ Բեհրութովը դրսեռը ում է իր ոչ միայն

քաջությունն ու խիզախությունը, այլև  
ռազմական ու վարչական բարձր կարողու-  
թյունները:

1829 թ. սեպտեմբերի 2-ին կնքվում է  
Ադրիանապոլսի հաշտությունը: Վերջա-  
նում է ռուս-թուրքական պատերազմը: Գե-  
ներալ Բեհբութովը, որը, ինչպես ռազմի  
դաշտում, այնպես էլ վարչական աշխատան-  
քի ասպարեզում ցույց էր տվել իր շնորհ-  
քը, ուղարկվում է Հայաստան՝ վարչական  
աշխատանքի: 1830—1838 թ. թ. նա վարում  
է Հայկական Մարզի պետի պատասխանա-  
տու պաշտոնը:

1840 թ. Բեհբութովը նշանակվում է  
գործող բանակի գլխավոր շտաբի աշխատող  
և թողնում է Կովկասը: Երկու տարի հետո  
մենք նրան տեսնում ենք լեհական նշանա-  
վոր Զամոստիա բերդի պարետի պաշտոնում:  
Լեհաստանում եղած ժամանակ՝ 1843 թ.  
հոկտեմբերի 10-ին Բեհբութովն ստանում է  
գեներալ-լեյտենանտի աստիճան:

1844 թ. սկզբներին Բեհբութովը կրկին  
տեղափոխվում է Կովկաս և ստանձնում Հյու-

սիսային ու Լեռնային Դաղստանի ռուսական գորքերի հրամանատարությունն ու Երկրի կառավարչությունը՝ Կովկասյան պատերազմների ծանր մի ժամանակաշրջան էր այդ: Բեհբութովի վրա, ինչպես վարչական, այնպես էլ ռազմական դժվարին խնդիրներ էին դրված: Սակայն, ինչպես միշտ, այս անգամ էլ նա մեծ հաջողությամբ է կատարում իր վրա դրված պարտականությունները, որի համար պարզեատրվում է Գեորգի երրորդ աստիճանի և Սպիտակ Արծվի շքանշաներով:

1847 թվի վերջերին Բեհբութովը նշանակվում է Անդրկովկասի քաղաքացիական վարչության պետ և գլխավոր վարչության խորհը նըրդի նախագահ: Իր այս պաշտոնում նա ակտիվ մասնակցություն է ունենում Վուրոնցովի կողմից Անդրկովկասում մտցված ոեֆորմներին: 1849—1850 թ. թ. իր աշքի ընկնող ծառայությունների համար նա երկու անգամ պարզեատրվում է Ալեքսանդր Նևկու շքանշանով:

Վրա է հասնում 1853—1856 թ.թ. Արե-

վելյան պատերազմը՝ Ռուսաստանի և Անդրբ-  
կովկասի ժողովուրդների համար ծանր փոր-  
ձությունների ժամանակաշրջանը։ Գեներալ  
Բեհրութովը կրկին կանչվում է գործող բա-  
նակի շարքերը։ 1853 թ. սեպտեմբերի 19-ին  
նա նշանակվում է Կովկասյան ֆրոնտում  
գործող կորպուսի հրամանատար։ Նրան նը-  
շանակել էր տվել ինքը՝ թագավորը, նկա-  
տի ունենալով Կովկասյան բանակի գլխա-  
վոր հրամանատար, ֆելդմարշալ Վորոնցովի  
ծերությունը (72 տարեկան) և վատառողջ  
վիճակը։

Կովկասյան կորպուսի և նրա հրամա-  
նատարի վրա գրված էր չափազանց պա-  
տասխանատու խնդիր։ Պետք էր պաշտպա-  
նել Անդրկովկասը թշնամու ներխուժումից,  
հարվածել նրան Սախական թյուրքիայում և  
դրանով իսկ ակտիվ օգնություն ցույց տալ  
Արևմտյան ֆրոնտում — Բալկաններով հար-  
ձակվող ոռւսական զորքերին։ Կովկասյան  
կորպուսի խնդիրը պատերազմի գլխավոր  
նպատակի համեմատությամբ ենթակա խըն-  
դիր էր։ Սակայն, այդպես լինելով հանդերձ,

նա մնում էր որպես ինքնուրույն ռազմա-  
ստրատեգիական միավոր։ Կովկասյան ֆրոն-  
տի հրամանատարն ինքն էր անորինում  
բոլոր օպերացիաները, ընդհանուր կապ  
պահելով միայն Արևմտյան ֆրոնտի հետ։

Ստանձնելով գործող կորպուսի հրամա-  
նատարությունը, Բեհրութովն իր տրամա-  
դրության տակ եղած փոքրաթիվ ուժերն  
արագությամբ դասավորում է Ախալքալա-  
կից մինչև Երևան ձգվող թյուրքական սահ-  
մանագծում, իսկ ինքը գալիս է Ալեքսան-  
դրոպոլի ֆրոնտը, որտեղ սպասվում էին  
վճռական մարտեր։

Օսմանյան կառավարությունը, որը թվով  
մի քանի անգամ ավելի զորք էր գուրս բե-  
րել Կովկասյան ֆրոնտ, իր գլխավոր ուժերը  
կենտրոնացրել էր Կարսում՝ էնդելսի խոս-  
քերով ասած՝ «Հայաստանի այդ պատվա-  
րում»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Ф. Энгельс, Избранные военные произве-  
дения, т. II, стр. 162, 1938 г., Москва.

Այսպիսով, երկու կողմերն էլ պատրաստվել և օրե օր սպասում էին հանդիպման:

Դրությունը չափազանց լարված էր մանավանդ Հայաստանի սահմանամերձ շրջաններում՝ Շիրակի, Սուրմալուի և Էջմիածնի գավառներում։ Օսմանյան զորքերը և քրդական զինված բանդաները հաճախակի հարձակումներ էին դործում այդ գավառների խաղաղ բնակիչների վրա, ավերում նրանց գյուղերը, կողոպտում նրանց ունեցվածքը։ Հայ գյուղացիները դիմում էին ինքնապաշտպանության։ Կառավարությունից գընտած սահմանափակ քանակությամբ զենքերով նրանք աշխարհազորային զինված ջոկատներ (միլիցիա) էին կազմակերպում, բայց միայն միլիցիայի ջանքերով չէին կարողանում վերջ տալ թշնամու ներխուժումներին, ասպատակություններին ու ավարտությանը։ Նրանք դիմում են Բեհրութութովի օդնությանը։ Բեհրութովը կազմակերպում է սահմանամերձ շրջանների հայ բնակչության օդնության դործը և կարողանում է սանձել թյուրքերի ու քրդերի՝

գայլի ախորժակը: 1853 թվականին Ալեք-  
սանդրոպոլից էջմիածին գրած մի նամա-  
կում Բեհրութովը ցավ է հայտնում հայերի  
կրած տառապանքների համար. «Յավալի է  
ինձ,— գրում է նա, — ականատես լինել մեր  
ազգի դառնակրություններին... Առավել ևս  
Շիրակի և Սուրմալուի գավառների մեր  
խեղն ազգի դառն վիճակին, որ ծագել է օս-  
մանյան զորքերի հարձակման հետևանքով»:<sup>1</sup>

1853 թ. հոկտեմբերին թյուրքական  
կորպուսի հրամանատար Արդի փաշան մոտ  
40 հազար զինվորներով բռնում է Արփա-  
չայի աջ ափը, Ալեքսանդրոպոլից 15 վերսա  
հեռու գտնվող Բաշ-Շորագյալ գյուղի մո-  
տերը՝ Ալեքսանդրոպոլի վրա հարձակվելու  
համար:

Թշնամու զորքերի ու նրա դասավորու-  
թյան մասին տեղեկությունն ձեռք բերելու  
համար գեներալ Բեհրութովը գուրս է բե-  
րում մի փոքր զորաբաժին՝ գեներալ-մայոր

---

<sup>1</sup> Հայկական ՍՍՈ. Պետական Կենտրոնական Ար-  
խիվ, ֆ. 57, գ. 157, թ. 132:

Օրբելիանու գլխավորությամբ: Բայց, դեռ  
իր խնդիրը չկատարած, Օրբելիանու զորա-  
բաժինը Բայանդուր գյուղի մոտ ընկնում է  
հակառակորդի հրետանու կրակի տակ և մեծ  
կորուստներ է կրում: Օրբելիանու զորա-  
բաժինը հերոսաբար կռվում է թշնամու  
դեմ, մինչև որ Բեհրութովն օդնության է  
հասնում և փրկում նրանց ոչնչացումից:

Այս առաջին հանդիպումից հետո Բեհ-  
րութովն իր ձեռքն է վերցնում հարձակման  
նախաձեռնությունը: Նոյեմբերի 14-ին նրա  
զորքերն անցնում են Արփաչայը, գրավում  
Բաշ-Շորագյալը, իսկ նոյեմբերի 19-ի լու-  
սաբացին Բաշ-Կադըքլար գյուղի մոտ հար-  
ձակվում են թշնամու գլխավոր ուժերի վրա:

Թյուրքական կորպուսի նոր հրամանա-  
տար Ահմեդ փաշան տեսնելով ոռւսական  
զորքերի հարձակումը, ասում է, «Մուսները  
խելքները կորցրել են. երդվում եմ ալլահի  
անունով, որ բոլորին պիտի ջարդեմ»: Նա  
հրամայում է թոկեր պատրաստել գերի զին-  
վորներին ու սպաներին սուլթանին ուղար-  
կելու համար:

Եվ այսպես. թմբուկների զարկերի ու  
նվազի տակ սկսվում է Բաշ-Կաղըքլարի  
ճակատամարտը:

Ահմեդ փաշան շատ էր վատահ իր զոր-  
քերի թվական գերակշռության վրա (36,000  
զինվոր, 46 թնդանոթ) և հույս ուներ, թե  
Բեհրութովի փոքրաթիվ ուժերը (10,000  
զինվոր, 32 թնդանոթ) չպտի կարողանային  
դիմանալ իր հարվածներին: Բայց փաշան  
չարաչար սխալվում էր, թերագնահատելով  
հակառակորդի ուժը:

Հակառակ Ահմեդ փաշայի զոռողամտու-  
թյան, Բեհրութովը խելացիորեն կաղմա-  
կերպում է իր զորքերի գրոհը թշնամու-  
ղեմ: Նա իր լավագույն զորամասերը գենե-  
րալներ Բաղրատիոն-Մուխրանսկու, Բըիմ-  
մերի, Օրբելիանու ղեկավարությամբ նե-  
տում է թշնամու աջ թեի վրա և վճռա-  
կան հարվածով հետ շպրտում նրան առա-  
ջին գծից: Ահմեդ փաշան շտապով մեծ թվով  
օդնական զորքեր է ուղարկում, որոնց հա-  
ջողվում է վերականգնել իրենց նախկին  
դիրքերը և նեղել հակառակորդին: Այդ կախվ-

Ներում մահացու վերք է ստանում գիներալ-  
մայոր Օրբելիանին։ Տեսնելով ստեղծված  
ծանր դրությունը, Բեհրութով անմիջապես  
վերցնում է երկու վաշտ երեանցիներից ու  
երկու թնդանոթ և անձամբ մտնում մարտի  
դաշտ։

— «Դե՛, եղբայրներ, այժմ ժամանակն է  
նորից առաջ գնալ» — գոչում է Բեհրութովը  
և առաջ ընկնում։

Բեհրութովի երեալը, նրա սրտառուչ  
խոսքերը և անձնական օրինակը ողեշնչում  
են մարտիկներին։ Վերսկսվում է կատաղի  
գրոհը։ Մարտիկներն իրենց սիրելի հրամա-  
նատարի ետևից խոյանում են թշնամու  
վրա։ Բորբոքվում են արյունահեղ սվինա-  
մարտերը։ Կովի թեժ ժամին Բեհրութովը  
հրամայում է առաջ շարժել հրետանին։ Հրե-  
տանու գիներալ Բըիմմերն իր քաջ մար-  
տիկների հետ սկսում է հնձել հակառա-  
կորդի հետեակը։ Գիներալ-մայոր Ճավ-  
ճավաձեի խիզախ հեծյալները հերոսաբար  
հետ են մզում թվով 8—10 անգամ գերա-  
կորող հակառակորդին։ Համառ ու կատաղի

մարտերը շարունակվում են մինչև ժամը 3-ը։  
Թյուրքերն այլևս չկարողանալով դիմանալ  
ոռւսների ճնշմանը, անկանոն կերպով ըս-  
կըսում են փախչել կռվի գաշտում թողնե-  
լով վեց հազարից ավելի սպանված ու վի-  
րավոր, 24 թնդանոթ, շատ զինք և այլ ուազ-  
մամթերք։ Բեհրութով այդ ճակատամար-  
տում տալիս է 317 սպանված և 926 վի-  
րավոր<sup>1</sup>։

Բաշ-կադըքլարի հաղթական ճակատա-  
մարտից հետո շատերն սպասում էին, որ  
Բեհրութովը կշարունակի հարձակումը և  
կպաշարի կարսը։ Մակայն, հակառակ սպա-  
սածին, նա իր զորքերը հետ է քաշում Ալեք-  
սանդրոպոլ՝ ձմեռելու համար։

Ալեքսանդրոպոլի բազմամարդ բնակչու-  
թյունը և զինվորներն ընդառաջ են գնում  
Բեհրութովին, և երբ նա երեսում է իր ձիու  
վրա, հնչում են ուռաներն ու զանդակների  
դողանջները, բերդից որոտում են հրանոթ-

---

<sup>1</sup> М. И. Богданович, Восточная война, т. I,  
стр. 252, 1877 г.

ները։ Այսպես էր ահա ժողովուրդը դիմավորում Բաշ-Կադըքլարի հերոսին։

Մաղմագետները շատ բարձր են գնահատում Բաշ-Կադըքլարի ճակատամարտում գեներալ Բեհրութովի տարած հաղթանակը։ Դեներալ-լեյտենանտ Բողդանովիչը, որը գրել է Արևելյան պատերազմի չորս հատուրանոց պատմությունը, ասում է, որ «Բաշ-Կադըքլարի հաղթանակը խոշոր նշանակություն ունեցավ ամբողջ Կռվկասյան ֆրոնտի համար . . . Բնականից մեծ ընդունակություններով օժտված Բեհրութովն աչքի ընկավ իր երկելի վնասականությամբ և քաջուրյամբ»<sup>1</sup>։

Բայց եղան մարդիկ, որոնք մեղադրեցին Բեհրութովին, թե նա Բաշ-Կադըքլարի հաղթությունից հետո չշարունակեց հարձակումը և չգրավեց Կարսը։ Այդ մարդկանց թվին էր պատկանում նաև նրա փոքր եղբայրը՝ գեներալ-լեյտենանտ Դավիթ Բեհրութովը։

<sup>1</sup> М. И. Богданович, Восточная война, т. I. стр. 254, 1877 г.

1854թ. հունվարի 17-ին Ալեքսանդրոս  
պոլից եղբորը գրած պատասխաննամամա-  
կում Բեհրութովը հետեւյալ կերպ է պատ-  
ճառաբանում իր այդ քայլը։ Նախ, գրում  
է նա եղբորը, չի կարելի պատերազմի դաշ-  
տից 3000 վերստ հեռու<sup>1</sup>, առանց լրիվ տե-  
ղեկություններ ունենալու գործող զորքերի  
մասին, Կոստանդնուպոլիսի ու Եվրոպայի  
թյուրքոֆիլ թերթերի տեղեկություններով  
դատել մեր գործողությունների մասին։

Դուք և ձեր համախոհներն ասում եք,  
գրում է այնուհետև Բեհրութովը, որ ես  
չպետք է հանդիստ տայի թշնամուն, պետք  
է հարձակվեի Կարսի վրա, գրավեի այն, և  
այնտեղ ձմեռեին իմ զորքերը։ Բայց դուք  
մոռանում եք, որ հարձակվող զորքերը  
պետք է ունենան դյուրաշարժ պարկեր՝  
հրետանային, ինժեներական և մթերային։  
«Առանց պարինամքերի՝ զորքը շարժվել չի  
կարող. դա ախյումա է» — գրում է Բեհրու-

---

<sup>1</sup> Գեն.-լեյտ. Դավիթ Բեհրութովը այդ ժամանակ  
ծառայում էր Լեհաստանում։

թովը: Եթե անդամ նկատի չունենանք այդ  
ամենը, հարձակման համար գոնե զորք հար-  
կավոր էր, թե՞ ոչ: «Ես պետք է օ գումար-  
տակով գնայի թեկուղ ջախջախված, բայց  
դեռ եռակի ուժեղ թշնամու դեմ, նրան ոչըն-  
չացնելու, Կարսը վերցնելու և այնտեղ ձմե-  
ռելու համար: Այն ժամանակ այդ նույն  
տակտիկները լիակատար իրավունք կունե-  
նային ինձ խելագար անվանելու: Վեց գու-  
մարտակով 1846 թ. ես գնացի Շամիլի դեմ  
և ցիր ու ցան արի նրան: Այժմ դա հին  
բան է: Ներկա պատերազմում չի կարելի  
ոխոկի ենթարկվել. Կարսը պաշտպանական  
լավ դրության մեջ է դրվել, ֆելդմարշալի<sup>1</sup>  
կարծիքը միանգամայն հիմնավոր է, անկա-  
րելի է երեք օրում վերցնել այդ ամրոցը,  
և իմաստ էլ չկար պաշարել բերդը, երբ ոչ  
դենք կար և ոչ էլ արկեր»:

«Սիրելի եղբայր, ես նախազգում էի և

---

1 Խոսքը ֆելդմարշալ դրաֆ Պաուկեիչ—Երեանսկու  
մասին է, որի հետ հավանութեն գեն. Դավիթ Բեհ-  
բութովը մտքերի վոլսանակություն է ունեցել Բաշ-  
կադըքլարի ճակատամարտի վերաբերյալ

կշտամբանքի ենթարկվեցի զի՞նվորական-ների կողմից, իսկական զի՞նվորական մարդկանցից, նրա համար, որ չգնացի ջարդված թշնամու հետեւից։ Այդպիսի նախատինքի ես թերեւ լիովին արժանի լինեի, բայց ֆելդմարշալի գիտողությունը՝ թե ես միշտոցներ և բավականաչափ զորք ունեցել եմ բերդը պաշարելու համար, իհարկե, ձեզ կը համոզի, որ եթե ես ունենայի այդ բոլորը, ապա, անկասկած, կշարժվեի առաջ...»։

Ապա՝ հայտնելով եղբորը, որ թագավորն իմանալով իր տրամադրության տակ ունեցած փոքրաթիվ ուժերի մտսին, ոչ միայն չի դատապարտել իրեն, այլև պարզեատրել է Գեորգի երկրորդ աստիճանի շքանշանով, գըում է. «Այժմ գիմելով դատավորներին, որոնք ուազմական գործի խիստ կանոններով են քննում գեներալների գործողությունները, պետք է ասեմ, որ հաղթանակը տարված է և նպատակն իրագործված, քանի որ թշնամու գունչը արնոտված և հեռու է շպրտված մեր սահմաններից։ Ես կայսերական շնորհով կըում եմ

Գեորգի երկրորդ աստիճանի զքանշան, իմ  
զորքերը հենց այստեղ, սահմանի վրա, տե-  
ղավորված են ձմեռային բնակարաննե-  
րում, իսկ դուք, հարգելի անողոք գատա-  
վորներ, ուզում էիք, որ ես, օդովելով հաղ-  
թանակից, շարժվեի առաջ, վերցնեի կարսը  
և այնտեղ ձմեռեի: Ձեզ համար, իհարկե,  
շատ հեշտ էր այդպես գատել տաք սենյա-  
կում նստած, համեղ և լավ ճաշից հետո,  
ծխախոտը բերաններիդ»<sup>1</sup>:

Եղբորը և առհանարակ իր քննադատ-  
ներին ուղղված այս պատոսխանի մեջ ցայ-  
տուն կերպով դրսեռորված են Բեհրութովի  
ուզմագիտական կարողությունները: Այս-  
տեղ խոսում է ուղմագիտական բարձր ու-  
նակություններով օժտված, կատարելապես  
հավատարակշոված, պատերազմների բովում  
կոփված, հմուտ և լրջախոհ զորավարը:

Բաշ-Կաղըքլարի ճակատամարտը գեներալ  
Բեհրութովի վերջին հաղթական ճակատա-  
մարտը չէր: Նրան վիճակից ես մի ճակա-

<sup>1</sup> Кавказский Сборник, т. XXIII, стр. 127—130.

տամարտ ունենալ, որը նրա նախորդ բոլոր ճակատամարտերից ամենից ավելի ծանըն էր, բայց միաժամանակ ամենից ավելի փառահեղը: Դա Կարսի շրջանի հուրուկդարա գյուղի մոտ 1854 թ. հուլիսի 24-ին տեղի ունեցած ճակատամարտն էր—Բեհբութովի ռազմական փառքի թագն ու պլսակը:

Հուլիսի 24-ին թյուրքական 60 հազարանոց կորպուսը Զարիֆ Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ հարձակվում է Բեհբութովի 18 հազարանոց ջոկատի վրա: Բեհբութովը մարտն ընդունում է բաց դաշտում: Ճակատամարտն սկսվում է առավոտյան ժամը 5-ին, երկուստեք հրետանային ուժեղ կրակով: Զարիֆ փաշան օգտվելով իր զորքերի թվական գերակշռությունից և նպաստավոր դիրքերից, փորձում է պաշարել Բեհբութովի հեծելազորը: Սակայն, նրա այդ փորձերը դառն հետեանքներ են ունենում հենց իրեն համար: Բեհբութովի խիզախ հեծյալները, հրետանու օգնությամբ, հաջողությամբ հետ են շպրտում հակառա-

կորդի գրոհը, առաջ են շարժվում մոտ երեք  
վերստ և գրավում 8 հրանոթ։ Այս առաջին  
հաջողությունից ողենչված՝ Բեհբութովը  
նախաձեռնությունն իր ձեռքն է վերցնում  
և կոմբինացված գրոհ է կազմակերպում  
հակառակորդի աջ թեր ու կենտրոնի վրա։  
Զարիֆ փաշան ցանկանալով ջլատել Բեհ-  
բութովի ուժերը, հարձակում է ձեռնար-  
կում նրա ձախ թեր վրա։ Բեհբութովը նը-  
րանց դեմ է նետում իր պահեստի ուժերը։  
Մարտադաշտն ընդարձակվում է ավելի քան  
հինգ վերստ։ Արյունահեղ կոմիտերը գնա-  
լով ավելի ու ավելի են բորբոքվում, չնա-  
յած շոգ ու տոթին և ջուր չլինելուն։ «Օս-  
մանցիք այնպիսի գիմազրություն էին ցույց  
տալիս, գրում է „Կավկազ“ թերթի թղթա-  
կիցը, որպիսին նրանցից երբեք չէին տե-  
սել հին դինվորները»<sup>1</sup>։

Սակայն, ի՞նչ կարող էին անել նրանք  
ուստի քաջարի գորքերին—գրում է ժամա-

<sup>1</sup> „Կավկազ“, 1854 թ. № 60.

**Նակակիցը—որոնք «միշտ սովոր են մարտում հաղթանակ տանել»<sup>1</sup>:**

**Կուրուկ-դարայի ճակատամարտն ավարտվել է Բենբութովի կատարյալ հաղթանակով: Թշնամին մարտի գաշտում թողնելով 2232 սպանված, 2018 գերի, 15 հրանոթ, մեծ քանակությամբ զենք, գրոշակներ, թմբուկներ և ձիեր, փախուստի է դիմում դեպի կարս: Բենբութովը տալիս է 599 սպանված, 483 վիրավոր և 62 կոնտուժահար<sup>2</sup>:**

**Նկարագրելով արյունահեղ այս ճակատամարտը, ականատեսը գրում է. «Այնտեղ պետք է տեսնեիք բազաբազուկ ռուս զորքերի զորությունը: Այնտեղ պետք է տեսնեիք մեր բազամարտիկ հեծելազորի և հետևակազորի կորովությունը, նիզակների և հրացանների շողջողումը, շաչյունն ու շառայունը:**

<sup>1</sup> ՀՍՍԾ. Պետ. Կենտ. Արխիվ, ֆ. 57, գ. 155, թ. 170, Ստեփանոս եպիսկոպոս Զոհբարյանի օրագրից:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 170—171:

Ընկնողների գոշմունքը, վիրավորների  
կերկերուն հառաջանքները և փախչողների  
ահռելի ձայները լցնում էին Կուրուկ-դա-  
րայի ձորը<sup>1</sup>:

Կուրուկ-դարայի ճակատամարտում և  
առհասարակ այս պատերազմում հայերից  
աչքի են ընկնում շտաբու-կապիտան Սա-  
հակյանը, գրենագերական գնդի շտաբու-կա-  
պիտան Արարատակին, «քաջն մայոր Շալի-  
կով Հայկազն» և ոստմիսոր Կոնստանդին  
Արդությանը։ Իսկ հայ կամավորներից մեծ  
քաջագործություններ է ցույց տալիս Գաբ-  
րիել Գեղամյանը։

Ճակատամարտից հետո Բեհրութովը շը-  
նորհավորում է իր զորքերի հաղթանա-  
կը հրետանային 101 դարկով, շնորհակա-  
լություն է հայտնում մարտերում առանձ-  
նապես աչքի ընկած հրամանատարներին  
ու զինվորներին և հանգիստ տալիս իր զոր-  
քերին։

<sup>1</sup> ՀՍՍՌ Պետ. Կենտ. Արխիվ, Փ. 57, գ. 155, թ.  
99. ընդգծումն իմ է. Վ., Պ.:

Նիկոլայ Ա-ը ստանալով Կուրուկ-դարացի ճակատամարտում Բեհրութովի տարած փայլուն հաղթանակի լուրը, ասում է. «Իշխան Բեհրութովն ուզում է ինձ գարմացնել իր հաղթանակներով, ես ել նրան կզարմացնեմ իմ պարզեներով»:

Կուրուկ-դարայի հաղթության համար Բեհրութովը ստանում է ո. Անդրեյ Պերվոզվանոց) շքանշան, որից Ռուսաստանում ընդամենը մի քանի բարձրաստիճան զինվորականներ ունեին, իսկ Կովկասյան պատերազմների մասնակիցների և հայ զինվորականների մեջ նա առաջինն էր:

Խաղմագետների ասելով՝ Կուրուկ-դարայի հաղթանակը վճռական նշանակություն է ունենում ամբողջ կամպանիայի համար<sup>1</sup>:

„New York Daily Tribune“ թերթի 1856 թ. հունվարի 25-ի խմբագրական հոդվածում էնդելու, խոսելով 1853—1854 թ. թ.

<sup>1</sup> Տես՝ Յանայի անունական տ. IV, стр. 487.

Կովկասյան ֆրոնտում տարված հաղթաւնակների մասին, գրում է.

«Մենք քիչ քիչ իմանում ենք Կարսի անկման մանրամասնությունները։ Մինչ այսօր նրանք լիովին հաստատում են այն տմենը, ինչ մենք քանիցս ասել ենք Փոքր Ասիայի թյուրքական բանակի դրության մասին։ Այժմ արգեն ոչ մի կերպ չի կարելի ժխտել որ այդ բանակը սիստեմատիկալար ոչնչացվել է թյուրքական կառավարության անհոգության, թյուրքական իշխող անսահման ծուլության, ֆաթալիզմի, բթամտության հետևանքով . . .

«Հայկական սարահարթը պաշտպանելու համար կենտրոնացված էր երկու բանակային կորպուս — վոքրասիականը և մեսոպոտամիականը, և, բացի այդ՝ սիրիական կորպուսի մի մասը։ Այդ զորքերն ուժեղացված էին իրենց պահեստի գումարակներով և կազմում էին քրդական ու բեդվինական անկազմակերպ մհծաքանակ զորամասերի միջուկը։

Սակայն, 1853 և 1854 թվականներին,

Ախալցիսայի ու Բայազետի միջև տեղի ունեցած չորս-հինգ անհաջող ճակատամարտերը փշրեցին այդ զորքերի համերաշխությունը և մարտական եռանդը, իսկ հանդերձանքի ու պարենամթերքի բացակայությունը ձմեռային ամիսներին՝ վերջնականապես կազմալուծեց «ըրանց»<sup>1</sup>:

Էնգելսի այս գնահատականը գերազանցապես վերաբերում է Բեհրութովի գլխավորությամբ մղված հաղթական ճակատամարտերին, և պատահական չէ, որ ոռուսական ու եվրոպական ռազմական շրջանները, հանձին նրա, տեսնում էին ժամանակակից նշանավոր զորավարներից մեկին:

Առանց չափազանցության կարելի է ասել, որ Բեհրութովի հրամանատարությամբ գործող Կովկասյան կորպուսի փայլուն հաղթանակներն էին, որ խափանեցին օսմանյան քանակի Անդրկովկաս ներխուժելու պլանները և հիմք դրին Կովկաս գե-

---

<sup>1</sup> Ф. Энгельс, Избранные военные произведения, т. II, стр. 161, 1938 г., Москва.

սահմանական է Կովկասը Ռուսաստանից  
կտրելու դաշնակիցների ազգեսիվ պլանների  
ձախողմանը: Կովկասյան կորպուսի հաղթանակները  
նկատելի չափով մեղմացրին  
նաև Արևելյան պատերազմում ցարական  
Ռուսաստանի կրած պարտության ծանր  
տպավորությունը:

1855 թ. մայիսից գործող կորպուսի հրամանատարությունն ընդունում է Կովկասի  
նոր փոխարքա գեներալ Ն. Մուրավյովը:  
Բեհրութովը նշանակվում է Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ և գործող  
կորպուսի մեջ չմտնող Կովկասյան առանձին  
զորամասի հրամանատար:

1856—1857 թ.թ. նա վարում է Կովկասի Գլխավոր Վարչության կից հիմնված  
ժամանակավոր կոմիտեի նախագահի պաշտոնը և մի կարճատե ժամանակ (Մուրավյովից հետո, մինչև Բարյատինսկու գալը)՝  
փոխարքայի պարտականությունները:

1857 թ. հունվարի 6-ին Բեհրութովն  
ստանում է հետեւակաղորի գեներալի (բե-

нерал от инфантерии) аստիճան, իսկ 1858 թ. փետրվարի 8-ին նշանակվում է Պետական Խորհրդի անդամ:

Իր կյանքի վերջին ամիսները գեներալ Բենբութովն անց է կացնում ծանր հիվանդության մեջ (ստամոքսի ռակ) և մեռնում է Թիֆլիսում 1858 թ. մարտի 10-ին:

Նրա մահը մեծ վիշտ է պատճառում պետական և հասարակական շրջաններում: Փարիզի «Մասեաց Աղաւնի» թերթի Թիֆլիսի թղթակցի ասելով, ամբողջ քաղաքը սուզ է պահում, շուկաները փակվում են, իսկ թաղումը կատարվում է մեծ հանդեսով:

Գեներալ Բենբութովը, որպես հմուտ և քաջ զորավար, մեծ ժողովրդականություն է ունեցել ինչպես իր ժամանակակիցների, այնպես էլ հետագա սերունդների մոտ:

Հայտնի Լազարյանները ողջունելով Կուրուկլուարայի ճակատամարտում նրա տարած հաղթանակը, գրել են, «Փառք և պատիվ է Հայաստանի համար, որ իր որդիների թվում ունի լայնածավալ երկրի այն-

քան արժանավոր կառավարիչ և դրա հետ  
միասին այժմ հերոս . . .

Դուք մեր ազգի փառքն ու պարծանքն  
եք»<sup>1:</sup>

Հայ ժողովրդի մեծ հայրենասեր Աբո-  
վյանը նրա անունը դրել է նշանավոր հայ  
զորավար Մաղաթովի անվան կողքին և  
նրանց համարում է մեր ազգային պար-  
ծանքը: «... Մաղաքովի ու Բեհրուքովի  
արածը բավական է, որ աշխարհը իմանա,  
քե ի՞նչ հոգի ուներ են ժամանակը մեր  
ազգը»<sup>2:</sup>

Այս, Բեհրուքովը հայ ժողովրդի քաջա-  
կորով ոգու արտահայտիչն էր, հայ և ոռու  
ժողովուրդների մարտական բարեկամության  
կենդանի մարմնացումը:

Նրա օրինակը թող է՝ լ ավելի ոգեշնչի  
չայրենական մեծ պատերազմի դաշտում  
մարտնչող հայ ժողովրդի հերոս զավակնես-

<sup>1</sup> Մատենադարան, ձեռագիր № 1860, թ. 45—50:

<sup>2</sup> Խ. Աբովյան — «Վեհրք Հայաստանի», ողբ  
հայրենասիրի», Երևան, 1940 թ., էջ 144:

ըին, թող է՛լ ավելի բարձր փողփողա հայ :  
ուռւս ժողովուրդների, սովետական բոլոր ժո-  
ղովուրդների մարտական բարեկամության  
պահանջակա դրոշը:

ԼՈՒԾԸ ԵՆ ՏԵՍՆԵԼ.

«Հայաստանի զավակների մարտական սխրա-  
գործությունները սերիալ հետեվյալ  
իրատարակությունները  
(Հայերեն և ռուսերեն լեզուներով)

Ճ.	Ա. Ղանալանյան — Հայքաջորդիներ	1 ռ.
Ա. Հ. Հ. Մուլադյան — Վարդան Մամիկո-		
նյան . . . . .		1 ռ.
Բ. Մ. Հյուսնյան — Դավիթ բեկ (միայն		
հայերեն) . . . . .		1 ռ.
Շ. Փերզիբաշյան — Գեներալ-լեյտե-		
նանու Վ. Մաղաթով . . . . .		1 ռ.
Ժ. Մ. Մջան — Գեներալ-ադյուտանտ		
Ի. Ղ. Ղազարե . . . . .		1 ռ.
Ղ. Պարսամյան — Գեներալ Վ. Բեհ-		
բութով . . . . .		2 ռ.
Հ. Վ. Պարսամյան — Գեներալ-լեյտենանտ		
Ա. Հ. Տեր-Ղուկասով . . . . .		1 ռ.
Տ. Հ. Էլչիբեկյան — Գեներալ-ադյուտանտ		
Մ. Տ. Լոռիս-Մելիքով . . . . .		1 ռ.
Զ. Ա. Քարիբ Զարյան — Սովորական Միու-		
թյան Հերոս կապիտան Ն. Գ. Մահմա-		
նյան . . . . .		1 ռ.

10. Աս. Աստաբյան — Ավագ լեյտենանտ  
Պատրիկ Գաղաղյան . . . . . 1 ս.  
11. Գ. Ստեփանյան — Սովետական Միու-  
թյան հերոս Սերգեյ Օհանյան . . . . 2 ս.

Արմֆանի հրատարակությունները ձեռք բերե-  
լու համար դիմել Հայպետհրատի գրախանութնե-  
րին:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.




FL0043248

7104

187

ԳԻՆԸ 2 ՐՈՒԲ.



ՊՐԵՍ